

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2008 թ. մայիսի 6-8-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Շաբոյանը մասնակցել են ք. Լյուքսեմբուրգում կայացած «Ազգային հաշիվները համագործակցության զարգացման ենթատեքստով» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2008 թ. մայիսի 13-15-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գյուլբենկյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Մարդահամարներ և կացարանների հաշվառում» թեմայով սեմինարին,
- ✓ 2008 թ. մայիսի 16-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Տուրինում (Իտալիա) կայացած «Աշխատանքի շուկայի համայնապատկերը Սևծովյան տարածաշրջանում և Տաջիկստանում» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2008 թ. մայիսի 20-23-ը ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Գևորգյանը և Ա. Շաբոյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Առուշանյանը մասնակցել են ք. Մանիլայում (Ֆիլիպիններ) կայացած «Ոչ ֆորմալ հատվածի գնահատումը» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2008 թ. մայիսի 26-30-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը և նույն բաժնի առաջատար մասնագետ Ս. Պետրոսյանը մասնակցել են ք. Ստոկհոլմում (Շվեդիա) կայացած «Շրջակա միջավայրի վիճակագրություն» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2008 թ. մայիսի 27-29-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Տեղեկատվական հանրության գնահատման» վերաբերյալ գլոբալ միջոցառմանը,
- ✓ 2008 թ. հունիսի 10-12-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի 56-րդ լիակազմ նստաշրջանին,
- ✓ 2008 թ. հունիսի 18-20-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Գ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Բանգկոկում (Թաիլանդ) կայացած «Մարդահամարի և հետազոտությունների միկրոտվյալների տարածում. առավելություններ և մարտահրավերներ» թեմայով աշխատանքային հանդիպմանը: